

ԱՊԿԱ

1. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԿԱ ծրագիրը տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն է:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Ապահովագրության ենթակա են՝


- միայն թեթև մարդատար SU-ները, որոնց թողարկման տարեթիվը սկսվում է 1996 թ.-ից
- որոնք շահագործվում են միայն՝ անձնական կամ ծառայողական նպատակներով
- որոնց ԱՊԴԱ պայմանագիրը կնքվում է «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ընկերությունում

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

- Անձնական վնասներ, որոնք ներառում են Տուժողի առողջությանը պատճառված վնասները,
- Գույքին պատճառված վնասներ, որոնք ներառում են Տուժողին պատկանող գույքի վնասվածքը կամ ոչնչացումը՝ բացառությամբ վնաս պատճառող Ավտոտրանսպորտային միջոցին կամ դրա կցորդին (կիսակցորդին) կցված կամ դրանց մեջ (վրա) գտնվող և Տուժողին սեփականության իրավունքով պատկանող գույքի:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

- մինչև 185 օր (ներառյալ) ժամկետով կնքվող ԱՊԿԱ Պայմանագրերի համար՝ 3.000 ՀՀ դրամ,
- 186-ից 366 օր (ներառյալ) ժամկետով կնքվող ԱՊԿԱ Պայմանագրերի համար՝ 5.000 ՀՀ դրամ:



5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- Միանվագ, պայմանագրի կնքման պահին

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- Գույքին պատճառված վնասների համար՝ 1.200.000 ՀՀ դրամ

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

- ՀՀ տարածք

8. ՖՐԱՆՇԻԶԱ (Ոչ պայմանական չհատուցվող գումար)

- Չի կիրառվում


9. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵԼԸ

Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել՝

- մինչև 185 օր (ներառյալ) ժամկետով
- 186-ից 366 օր (ներառյալ)
- Ապահովագրության պայմանագիր ուժի մեջ է մտնում ԱՊՊԱ պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից, բայց ոչ շուտ քան կնքման օրվանից երկու օր հետո և ավարտվում է ԱՊՊԱ պայմանագրի ավարտի օրը
- ԱՊԿԱ պայմանագրի գործողությունը ինքնաշխատ դադարում է ՏՄ սեփականության իրավունքը փոփոխվելու կամ ԱՊՊԱ պայմանագիրը որևէ հիմքով դադարելու պահից
- Ապահովադրի պահանջով ԱՊԿԱ պայմանագրի դադարեցման արդյունքում ապահովագրավճարը չի վերադարձվում:

10. ԼԻԱԶՈՐՎԱԾ ՎԱՐՈՐԴՆԵՐ

- Անսահմանափակ



11. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ավտոմեքենայի տեխնիկական անձնագիր կամ հաշվառման հայտարարագիր
- Ապահովադրի փաստաթղթեր (անձնագիր և սոց.քարտ)
- Հեռախոսահամար

12. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ/ՇԱՀԱՌՈՒԻ/ԼԻԱԶՈՐՎԱԾ ՎԱՐՈՐԴԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Ապահովադիրը/Շահառուն/Վարորդը ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարտավոր է

- չտեղաշարժել ավտոմեքենան
 - չլքել, չթողնել, չհեռանալ պատահարի վայրից
 - չընդունել որևէ պատասխանատվություն
 - անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին՝ պայմանագրում նշված հեռախոսահամարով:
- Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը/Շահառուն/Լիազորված տիրապետողը ապահովագրական պատահարի արդյունքում գտնվել է անգիտակից վիճակում: Անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը/Շահառուն պարտավոր է անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին:



13. ՎՆԱՍԻ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Տուժողի (Տուժողի) իրավահաջորդի կողմից տվյալ ապահովագրական պատահարի հետևանքով ԱՊՊԱ օրենսդրության համաձայն ապահովագրական հատուցում ստանալու, ինչպես նաև գրավոր դիմումը և փաստաթղթերը Պայմաններով սահմանված ժամկետում ներկայացնելու օրվանից հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, Ապահովագրողն ընդունում է որոշում՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովագրական հատուցում իրականացնելու, հատուցումը նվազեցնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին: Ընդ որում, վնասը հատուցվում է պատահարի պահին Պայմանագրում նշած ավտոմեքենան շահագործած անձի՝ պատահարում մեղավորության աստիճանին համամասնորեն: Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հատուցումը մերժելու դեպքում՝ կայացված պատճառաբանված որոշումն ընդունելու պահից 3 (երեք) օրվա ընթացքում ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով սահմանված կարգով այն ուղարկում է Ապահովադրին, ապահովագրված անձին և Տուժողին (նրա իրավահաջորդին):

